ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԵՐԿՓՈՒԼ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **«23» «04» 2024թ.**

Ժամը 11:00

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

ա. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության պետ Ա. Ափյան (հանձնաժողովի նախագահ),

բ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության պետի տեղակալ Ա. Թամազյան,

գ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության «Տեսալուսանկարահանող էլեկտրոնային համակարգերի կառավարման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Ավետիսյան,

դ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության օպերատիվ կառավարման կենտրոնի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Կ. Գյուլումյան,

ե. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության տեխնիկական աջակցման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Է. Անդրիասյան,

զ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության կազմակերպման վարչության ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բաժնի ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան Ն. Հակոբյան,

է. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Աբասյանին (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

1. **ՕՐԱԿԱՐԳ.**

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **հանցագործությունների կանխարգելման և բացահայտման, ինչպես նաև ճանապարհային երթևեկության անվտանգության և իրավախախտումների արձանագրման համակարգի** ձեռքբերման նպատակով երկփուլ մրցույթի միջոցով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ** ծածկագրով առաջին փուլի նիստում արձանագրվեց, որ առաջին փուլի հրավերի տեխնիկական բնութագրում առկա են վրիպակներ:

2. **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝**

ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ ծածկագրով երկփուլ մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի առաջին փուլի հրավերում կատարել փոփոխություն, մասնավորապես՝ ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ ծածկագրով երկփուլ մրցույթի առաջին փուլի հրավերի տեխնիկական բնութագրում՝ **Տեսահսկողական համակարգի տեղադրման ծառայությունԺ Ճանապարհային երթևեկություն բաժնի 1-ին մասի 3-րդ ենթակետում նշված «*և կատարված սխալների արդյունքում ինքնուսուցում*:» բառը հեռացվել է:**

3. **ՀՀ ՆԳՆ ԵՄԱՊՁԲ-05/2024/ՏՏԿՎ** ծածկագրով երկփուլ մրցույթի միջոցով գնում կատարելու գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել երկփուլ մրցույթի միջոցով գնում կատարելու առաջին փուլի հրավերի տեքստը և հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հրավերի փոփոխության մասին հայտարարությունը հաստատելու օրվան հաջորդող 30-րդ օրացուցային օրը, այն է՝ 23.05.2024թ., ժամը 11:00-ին ք. Երևան, Նալբանդյան 130 հասցեում, ՀՀ ՆԳՆ ՏՎ ԳՀ բաժնում:

Հարցվեց դիրքորոշումը՝ կողմ 6, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ափյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Թամազյան

Ա. Ավետիսյան

Կ. Գյուլումյան

Է. Անդրիասյան

Ն. Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Աբասյան